ենթակա է մերժման, քանի որ լրացել է հայցը Դատարան ներկայացնելու համար օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետը, ինչով պայմանավորված՝ այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը չի անդրադառնում:

6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Սույն գործով Հայցվորը դատարան դիմելու համար նախապես վճարել է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ պետական տուրքի գումարը:

Նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ, 234.5-րդ, 234.12-րդ, 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ագրոթեքինվեստ» ՍՊԸ հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի հայտարարված հրատապ բաց մրցույթի թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-24/1 ծածկագրով ընթացակարգի 04.01.2024թ. կայացված (թիվ 5 արձանագրություն) պայմանագիր կնքելու որոշման մասին համառոտ տեղեկատվության 34-րդ և 35-րդ չափաբաժիններում՝ «Մասնակցի առաջարկած գին» աղյուսակում ուղղում կատարելուն և ուղղված պայմանագրային գնով պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու, իսկ անհնարինության դեպքում մասնակի՝ «ԱԳՐՈԹԵՔԻՆՎԵՍՏ» ՍՊԸ հայտը (փաստաթղթերը) մրցույթի հրավերին համապատասխան ճանաչելու և ընտրված մասնակից (հաղթող ճանաչելու) մասերով, 26.12.2023թ. նիստի թիվ 3 և 29.12.2023թ. նիստի թիվ 4 արձանագրություններն անվավեր ճանաչելու և գնառաջարկի անհամապատասխանության հիմքով հայտը մերժված ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Դատարանի 31.01.2024թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը՝ պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին ձեռնպահ մնալ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ կողմից՝ N 33.2-08/442, տրված 20.12.2023թ. Բանկային երաշխիքով սահմանված հայտի ապահովման միջոց 23,964,325 ՀՀ դրամ գումարը բռնագանձելուց, պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**